

Ա-31

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ալի Ահմադ Ալի-զադե

Հասարակական-քաղաքական զարգացումներն
Իրանում 19-րդ դարի առաջին կեսին և Հաջի Միրզա
Աղասի Երևանցու պատմական դերը

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2011

ԻԷ-Ն

Ա. Գ.

Ատենախոսության քեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր՝ Գ.Ս. Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր՝ Մ.Ա. Մուրադյան

պ.գ.թ., դոցենտ՝ Զ.Պ. Կոստիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011թ. նոյեմբերի 3-ին, ժամը 15.00-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2011թ. սեպտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պ.գ.թ.՝ Ռ. Ղազարյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

XIX դ-ի սկզբներին աշխարհում հաստատվեց այնպիսի աշխարհաքաղաքական իրավիճակ, որը մղեց Ղաջարական Իրանի իշխող շրջանակներին երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական կառուցվածքում իրականացնելու բարեփոխումներ: Եվրոպայում գերիշխող ֆրանսիական կայսր Նապոլեոնը ձգտում էր համաշխարհային տիրապետության, որը հանգեցրեց ռուսական կայսրության հետ պատերազմի: Իր հերթին՝ Ռուսաստանը XIX դ-ի սկզբներին կրկին անցավ Կովկասյան լեռնաշղթան և նույն դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում Իրանից գրավեց նրա կովկասյան նահանգները (խանությունները): Նապոլեոնի ձգտումը՝ գրավելու Հնդկաստանը, որպեսզի թուլացնի Անգլիան, նրան կանգնեցրեց Իրանը նվաճելու անհրաժեշտության առջև: XIX դ-ի սկզբներին Իրանում բախվում էին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի շահերը: Անգլիացիները շատ էին անհանգստանում Ռուսաստանի ներթափանցումից իրանական տարածքներ, իսկ հետագայում՝ Հնդկաստան: Որպեսզի դիմակայեն Իրանն իրենց ենթարկելու ֆրանսիական և ռուսական ծրագրերին՝ անգլիացիները պատրաստ էին դիմելու մեծ ծախսերի և աջակցելու իրանական հասարակությունը արդիականացնելու ծրագրերին: Ռուս-իրանական պատերազմները XIX դ-ի առաջին երեք տասնամյակներին ամբողջությամբ ցույց տվեցին Ղաջարական Իրանի հետամնացության աստիճանը: Որպես առաջին խնդիր՝ Իրանի առջև ծառայող տարածքային ամբողջականությունը պահպանելու հարցը: Մինչև Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը մուտք էին գործում քաղաքակրթական զարգացման մի նոր փուլ, Իրանի առջև դրված էր սոցիալական և քաղաքական համակարգի, պետական կառավարման և բանակի, երկրի տնտեսության վերափոխման հանձնարարականը, որպեսզի երկիրը մրցունակ դառնա համաշխարհային թատերաբեմում:

Իրանական ժողովուրդը մշտապես հպարտացել է իր հնագույն և փառավոր պատմությամբ ու մշակույթով: Սակայն, հասարակության մեծագույն մասը պատրաստ չէր կտրուկ քայլերի կամ վերափոխումների: Միայն քչերն էին պատրաստ գնալու զոհողությունների և սկսելու բարեփոխումներ, ինչն իրականացնելու փորձ Իրանը չուներ: Ոչ ոք չգիտեր՝ ինչից սկսել և որ ուղղությամբ շարժվել:

Իրանի պատմության XIX դ-ի մեծ բարեփոխիչների շարքում առանձնանում են Հաջի Միրզա Աղասի Երևանցու և Թաղի-խան Ամիր-Քաբիրի կերպարները: Ընդ որում, եթե Ամիր-Քաբիրի մասին առկա են մի քանի աշխատություններ և առանձին հոդվածներ, սակայն, այդ նույնը չենք կարող ասել Հաջի Միրզա Աղասի Երևանցու մասին, որի անձը անարդարացիորեն մոռացության է գրվել:

Հետազոտության քեմայի արդիականությունը

Իրանի պատմության մեջ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կյանքն ու գործունեությունը չի արժանացել անհրաժեշտ գնահատանքի և փաստորեն այսօր մոռացության է մատնվել իր հակառակորդների ու չարակամների ջանքերով, որոնք ամեն կերպ փնտրում էին նրան թե XIX, և թե XX դարերում,

իսկ նրա 13-ամյա ողջ գործունեությունը շարժանացավ համապատասխան գնահատականի ինչպես Իրանի պատմաբանների և քաղաքագետների կողմից, այնպես էլ՝ երկրի սահմաններից դուրս:

Սույն աշխատանքը կոչված է վերականգնելու պատմական արդարությունը և ցույց տալու առաջին բարեփոխիչների գործունեության ողջ դժվարին ճանապարհը, որոնց մեջ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կերպարը գրավում է առաջնային տեղերից մեկը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները

Իրանում XIX դ-ի սկզբի հասարակական-քաղաքական դրության ուսումնասիրությունը և Հաջի Միրզա Աղասի Երևանցու դերի բացահայտումը այն բարեփոխումների ու վերափոխումների շարքում, որոնք տեղ գտան Իրանում XIX դ-ի 30-50-ական թթ-ին, մեզ կօգնի վեր հանելու այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք կանգնած էին Իրանի արդիականացման ճանապարհին XIX դ-ի ողջ ընթացքում: Սաղորագամ Հաջի Միրզա Աղասի Երևանցու դերի և գործունեության գնահատումն ու պատմական արդարության վերականգնումը թույլ կտա լրացնելու ևս մեկ բաց («ճերմակ հետք») արդիականացման ուղին բռնած երկրի պատմության մեջ:

Աշխատանքի գիտական նորույթը

Հաջի Միրզա Աղասի Երևանցու կյանքի և գործունեության մասին մի քանի հոդվածների և ուսումնասիրությունների¹ առկայությանը հակառակ՝ մինչ օրս չի գրվել այս քաղաքական և պատմական գործչին նվիրված որևէ հատուկ մենագրություն: Մինչդեռ, մյուս բարեփոխիչի՝ Ամիր Քաբիրի գործունեությանը նվիրված են մի քանի հիմնարար մենագրություններ և տարբեր հեղինակների հոդվածներ²: Աշխատանքի նորույթը կայանում է Հաջի Միրզա Աղասի Երևանցու՝ Ղաջարական Իրանի պատմության մեջ ունեցած այն նշանակությունը և դերակատարությունը, որը մենք փորձել ենք վեր հանել հենվելով պարսկերենով, եվրոպական տարբեր լեզուներով, ինչպես նաև՝ հայերեն լեզվով գրված մեծաթիվ աշխատանքների վրա:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության նյութը ներկայացված է հիմնականում հենվելով պարսիկ պատմաբանների ուսումնասիրությունների վրա՝ ռուս, անգլիացի, ֆրանսիացի և հայ հեղինակների ուսումնասիրությունների լայն ընդգրկմամբ: Աշխատանքում օգտագործվել է պատմա-համեմատական միջոցը, անցկացվում է վերլուծություն և համադրվում տարբեր տեսակետներ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարության նույն քայլի և միևնույն իրադարձության գնահատման համար: Փորձ է արվում նոր հայացք նետել

¹ Афшар А. Сират-е намай-е Хаджи Мирза Агаси // Рухнамай-и китаб, No. 4, Тегран, 1340/1961; Эсфанд А. Хаджи Мирза Агаси // Ягма, Саленуздохом, No. 12, Тегран, 1345/1965; Саадат Н. Хаджи Мирза Агаси // Ягма, No. 16-20, Тегран, 1342-1346/1962-1968; Amanat A. Aqasi Hadji Mirza Abbas Irvani // Encyclopaedia Iranica. Ed. By E. Yarshater. Vol. II. London - New York, 1987.

² Адамайят Ф. Амир Кабир-е ва Иран /Изд. Хорезми, Тегран, 1354/1975; Эгбал Аббас. Мирза Таги-хан Амир Кабир /Изд. Тус. Тегран, 1363/1984.

Իրանի պատմության՝ XIX դ-ի առաջին կեսի իրադարձություններին և փաստերին, նորովի մեկնաբանել արդիականացման երկար ճանապարհին արված կառավարության առաջին բարեփոխումները և ցույց տալ այդ ճանապարհին առկա այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք սպասում էին բարեփոխիչներին: Քննարկվում են Իրանի ներքաղաքական զարգացման մասին անգլիացի հեղինակների առաջարկած տարբեր հայեցակարգեր: Լայնորեն կիրառվել է տարբեր հայացքների համադրության մեթոդը, ընդգծվել են այն պարսիկ պատմաբանների տեսակետները, որոնք, մեր կարծիքով, արդարացի են:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները

Ուսումնասիրության առարկան ընդգրկում է XVIII դ-ի վերջերից մինչև XIX դ-ի 40-ական թթ. ընկած շրջանը, երբ Իրանի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան կարևորագույն փոփոխություններ, իսկ արտաքին քաղաքականությունն ընդունեց պայքարի որակական նոր բնույթ՝ ընդդեմ երկիր մեծ տերությունների ներթափանցման:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում է մի քանի բաժինների, ինչպես նաև վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից (պարսկերեն՝ 93 անուն, անգլերեն, ֆրանսերեն՝ 66, ռուսերեն՝ 117, և հայերեն՝ 11 անուն):

Առաջին գլխում քննարկվում են իրանական հասարակության ավանդական հարաբերություններն ու կառուցվածքը, տրվում է պարսիկ և այլազգի հեղինակների՝ առավել կարևոր գիտական ուսումնասիրությունների տեսությունը³, որից հետո քննարկվում է Ղաջարական հարստության իշխանության գալը Իրանում XVIII դ-ի վերջերին՝ երկարատև և արյունահեղ պայքարից հետո: Այնուհետև քննարկվում է երկրի ներքին դրությունը XIX դ-ի 30-40-ական թթ-ին և դարասկզբին Իրանի հետագա զարգացման վրա երկու ռուս-իրանական պատերազմների ունեցած հետևանքները⁴: Առանձին ներկայացվում է Օսմանյան Թուրքիայի, ֆրանսիական կայսրության և Անգլիայի հետ փոխհարաբերությունների խնդիրը XIX դ-ի առաջին կեսին:

Խոսք է գնում Ա. Կ. Ս. Լենքթոնի ուսումնասիրությունների կարևորության մասին⁵, պատմագրության կոնտեքստում առանձնացվում են Մ.Թ. Սեպեհրի, Ա. Թաջբախի, Ֆ. Աղամիյաթի, Ա. Ամանաթի, Ա. Գաֆարիի, Կ. Արակի, Ա.

³ Стен` Таджбахш А., Эгбал Аб., Адамайят Ф., Сепакр М.Т.- Лисан ол-Мольк, Гаффарии А., Шабани Р., Мостоуфи Абд., Эттемад ос-Салтане, Вахиди Нийа, Элгара Х., Табатабайи М., Райина Эс., Сасани А. Хан-Малека, Фалсафи Н., Неемани Ф., Варахрама Г., Хедайята Р.К.Х.

⁴ Дубровин Н.Ф. История войны и владычества русских на Кавказе, СПб., Т. 3. 1886; Потто В.А. Кавказская война. Т. 2-3. Ставрополь, 1993; Балаян Б.П. Дипломатическая история русско-иранских войн. Ереван, 1988; Иванов М.С. Очерки истории Ирана. М., 1952.

⁵ Lambton A.K.S. Landlord and Peasant in Persia. London, 1953; A Study of the role of the merchant in mid-nineteenth century in Persia // Iran and Islam. Edinburgh, 1971; State and Government in Medieval Islam. Oxford, 1981.

Մոսթուֆիի, Վահիդ Նիյայի, Մ.Կ. Խեղայաթիի, Էթեմնադ սա-Սալբանիի, ինչպես նաև XIX դ-ի եվրոպացի ճանապարհորդներ Ա. ժուրերի, Ժ.-Ֆ. Գամբի, Օ. Ֆլանդինի, կոմս դե Սասի, Գ. Դրովիլի, Ժ.-Բ. Ռուստոյի, Դ. Մորիերի և շատ այլոց ճանապարհորդական նորերն ու դիտարկումները⁶: Ընդհանուր առմամբ՝ եվրոպացի ճանապարհորդները անբարյացկամությամբ են նկարագրում երկիրը և բացասաբար ընդունում բազում ավանդույթներ և սովորույթներ, նրանց նորերում զգացվում է ամբարտավան և անբարյացկամ վերաբերմունք դեպի այս երկիրն ու նրանում բնակվող ժողովուրդները:

Արքաա Էգբալի և Ֆերիդուն Աղամիյաթի աշխատանքներում⁷ մանրամասն քննարկվում են Ամիր Քաբիրի բարեփոխումները, սակայն, քանի որ նա Հաջի Միրզա Աղասի Երևանցու հետևորդն էր, ուստի այս հեղինակները ստիպված են հաճախ անդրադառնալ այս ստորագամի կառավարման շրջանին: Քննարկվող դարաշրջանում իրանական հասարակության ներքին իրավիճակը հասկանալու համար կարևոր նշանակություն ունեն ամերիկացի արևելագետներ Ե. Արքահամյանի, Չ. Իսավիի, Ա. Ամանաթի գործերը⁸: Այս դարաշրջանը քննարկող ռուս հետազոտողների աշխատանքներից առանձնանում են Ա.Պ. Բերժեի, Միրզա Ջյազըմ-բեկի, Բ.Պ. Բալայանի, Մ.Ա. Իզամբերդիևի, Ն.Ա. Կուզնեցովայի, Ա.Վ. Ֆադեևի, Վ.Ա. Պոտտոյի, Մ.Ս. Իվանովայի և այլոց հրատարակությունները⁹:

Առաջին գլխի երկրորդ բաժնում քննարկվում է Ղաջարների պայքարը շահնշահի գահի համար և նրանց իշխանության գալը (պաշտոնական թագադրությունը) 1796թ-ին: Ձեռնդերի հետ պայքարը արյունահեղ էր և երկարատև, և արդեն այս շրջանում Ռուսաստանը և քիչ պակաս չափով՝ Անգլիան, սկսեցին ակտիվորեն միջամտել Իրանի ներքին գործերին:

⁶ Jaubert P. Amadee. Voyage en Armenie et en Perse fait dans les annees. Paris, 1821; Flandin E. and Coste P. Voyage en Perse de Eugene Flandin. 1840-1841. Vol. 1-2. Pa8is, 1851; Drouville G. Voyage en Perse fait en 1812 et 1813. V. I-II. Turin, 1829; Gamba J.-F. Voyage dans la Russie meridionale et particuliere ment dans les provinces de Caucase. Vol. I-II, Paris, 1826; Morier J. Voyage en Perse, en Armenie, en Asia-Minuere. Vol. I-II. Paris, 1813.

⁷ Эгбал Аббас. Мирза Таги-хан Амир кабир. / Изд. Тус. Техран, 1363/1984; Адамайят Ф. Амир Кабир-е ва Ибан /Изд. Хорезми. 1354/1975.

⁸ Issawi Ch. The Economic History of Iran. 1800-1914. Chicago-London, 1971; Исави Ч. Тарих-е эхтесадий-е Иран /Изд. Гостаре, Техран, 1362/1983; Abrahamian Er. Tortured Confessions: in Modern Iran. Berkeley, 1999; Amanat A. Cities and Trade: Consul Abbout on the Economy and Society of Iran. London. 1983; Nasir ad-Din Shah and the Iranian monarchy. 1831-1896. London, 1997.

⁹ Берже А.П. Самсон Макинцев и русские беглецы в Персии //Русская старина. М., 1876, No. 4; его же — Александр Грибоедов в Персии и на Кавказе // газ. "Кавказ", Тифлис, 1874, No. 138, 139, 140; Мирза Казем-бек. Баб и бабиды: смуты в Персии в 1844-1852гг. СПб., 1865; Балаян Б.П. Дипломатическая история русско-иранских войн. Ереван, 1988; его же — Племена южного Ирана. Ереван, 1977; Игамбердыев М.А. Иран в международных отношениях первой трети XIX в. Самарканд, 1961; Кузнецова Н.А. Политическое и социально-экономическое положение Ирана // Очерки новой истории Ирана. М., 1978; ее же — Иран в первой половине XIXв. М., 1983; Фадеев А.В. Россия и Кавказ в первой трети XIX в. М., 1960; Потто В.А. Кавказская война. В 5ти томах. Ставрополь, 1993; Иванов М.С. Бабидские восстания в Иране. Ленинград., 1939; его же — Очерки истории Ирана. М., 1952.

Ղաջարները ձգտում էին վերականգնել Սեֆյանների տերության սահմանները և հավակնում էին իշխելու Արևելյան Վրաստանի, Արևելյան Հայաստանի և արևելյան Անդրկովկասի ուր մուսուլմանական խանությունների վրա: Աղա-Մուհամմադ խանի դաժանությունն հանգեցրեց այն բանին, որ Ռուսաստանի հովանավորությանը դիմեն ոչ միայն Վրաստանի և Հայաստանի քրիստոնյա բնակչությունը, այլև Շաբիի, Ղուբայի, Թալիշի, Դերբենդի մուսուլմանական խանությունները: Աղա-Մուհամմադ խանի դաժանություններն ու արյունոտ հաշվեհարդարները դժգոհների հանդեպ հանգեցրեց իրանական ազնվականության կողմից դավադրության կազմակերպմանը, որն ավարտվեց ոչ վաղուց որպես շահնշահ թագադրված Աղա-Մուհամմադ խանի սպանությամբ 1797թ-ին՝ Շուշիին մերձակա ռազմական ճամբարում¹⁰: Թվում էր՝ Ղաջարների հարստությունը չի կարող պահել իշխանությունը և կանհետանա Իրանի պատմության քառերաբեմից:

Սակայն, Ֆաթի-Ալի շահին (1797-1834թթ.) հաջողվեց համոզելով և կաշառելով, իսկ երբեմն նաև ռազմական ուժով հաշվեհարդար տեսնել գահի բոլոր հավակնորդների հետ: Ֆաթի-Ալի շահը երազում էր կառավարել խաղաղությամբ և առանց պատերազմների, սակայն, գահաժառանգ (*վելիահոդ*) Արքաա-Միրզայի նախաձեռնությամբ նա ստիպված եղավ երկու անգամ պատերազմել Ռուսաստանի դեմ հարավային Կովկասում և ճաշակել պարտության դաժնությունը: Իրանի հյուսիսային սահմանները Արաքս գետով հաստատվեցին այս պատերազմների արդյունքում: «Վեքիլ»-ի տիտղոսը վերացվեց և XVIII դ-ի վերջերից կառավարության ղեկավարի համար մտցվեց նոր տիտղոս՝ *սադրազամ*: Ողջ երկիրը նորից բաժանվեց նահանգների, որոնք ղեկավարում էին բեգլարբեկները «խաև» կամ «շահզադե» տիտղոսով: Սադրազամները կազմավորեցին երեք նախարարություն՝ ֆինանսական (մուսարաֆի օլ-մամալեթ), արտաքին և ներքին գործերի (մունշի օլ-մամալեթ), ռազմական գերատեսչություն (սալար-ի լաշկարի): Իրանի մոտ 10 մլն բնակչությունից XIX դ-ի սկզբներին քաղաքային բնակչությունը կազմում էր մոտ 2 մլն (20 %), ազնվականությունն ու բարձրագույն հրամանատարական խավը՝ 1 մլն մարդ (10 %), քոչվորները (արաբներ, քրդեր, իրանցիներ, քյուրքեր)՝ մոտ 1.5 – 1.7 մլն մարդ (մոտ 16 %) և ոչ պակաս քան 5.5 մլն մարդ (բնակչության 55 %-ը) կազմում էին ռայաները (գյուղացիները), որոնք ապրում էին հողագործությամբ¹¹: Նկատենք, որ Իրանի քաղաքների մեծ մասը, որոնք ծաղկում էին Հուլավյան և Սեֆյան դարաշրջաններում, այժմ աղքատացել էին, բնակչությունը՝ կտրուկ նվազել, արհեստագործությունը՝ անկում ապրել: Այնուամենայնիվ, երկրում կային ոչ պակաս, քան 80-90 խոշոր քաղաքներ (Հուլավյանների օրոք՝ 200, Սեֆյանների օրոք՝ 150), որոնք բնակչության թիվն անցնում էր մի քանի տասնյակ հազար մարդու¹²: Դրանք էին՝ Թեհրանը, Սպահանը, Թավրիզը, Մերվը, Մեշհեդը, Նիշապուրը, Յազդը, Շիրազը:

¹⁰ Шарашенидзе З.М. Внутриполитическое положение и внешняя политика Ирана в нач. XIX в. Тбилиси, 1984 (на груз. яз.); Բայրուրյան Վ. Իրանի պատմություն, Երևան, 2006, էջ 406:

¹¹ Issawi Ch. The Economic History of Iran. 1800-1914. Chicago-London, 1971, pp. 102-105.

¹² Рондели А.Д. Основные вопросы формирования и развития городов Ирана. Тбилиси, 1974, сс. 8-9; Шопен И. Исторический памятник состояния Армянской области. СОб., 1852. сс. 478-481.

Երևանում ապրում էր ոչ ավելի, քան 12-15 հազ. բանկիչ, իսկ Ագուլիսում՝ 40 հազ.: Բոլոր պատմաբանները վկայում են քաղաքային բնակչության շարքում ծառաների և սպասարկող անձնակազմի թվաքանակի աճի մասին՝ նախորդ դարաշրջանի համեմատությամբ:

Հաջորդ բաժնում քննարկվում են Ռուսական կայսրության հետ փոխհարաբերությունները XVIII դ-ի վերջ – XIX դ-ի սկզբներին: Գեներալ Վ.Ա. Չուրովի արշավանքը 1796թ-ին ուներ սպառնալից բնույթ՝ Ղազարական Իրանի ամբողջականության համար, և Աղա-Մուհամմադ խանը մեծ տազնապով էր պատրաստվում հակահարված տալու ռուսներին և պատրաստվում էր նրանց ընդառաջ գնալ՝ դեպի Արաքսի ափեր, երբ հանկարծ հայտնի դարձավ, որ ռուսները դադարեցրել են առաջխաղացումը, իսկ 1979թ-ի հունվարին ետ դարձան դեպի Դերբենդ: Այս ընթացքում պարսից շահին դավաճանել էին Շամախիի, Շաքիի, Ղուվայի, Բաքվի և Թալիշի մուսուլման խաները, իսկ վրաց կառավարիչ Հերակլ II-ը ամեն կերպ դրդում էր ռուսներին գրավելու հարավային կովկասում ընկած իրանական բոլոր նահանգները: Արդեն 1801թ-ին ռուսները մտան Արևելյան Վրաստան և գրավեցին Թբիլիսին, իսկ 1802-ին բազմաթիվ մուսուլմանական խանություններ Ռուսաստանի հետ ստորագրեցին Ռուսաստանի հովանավորությունն ընդունելու ք նրա հպատակության տակ անցնելու պայմանագրեր¹³: Ֆաթի-Ալի շահը չընդունեց հարավային Կովկասում տեղի ունեցած այս փոփոխությունները և Ռուսաստանից պահանջեց դուրս բերել զորքերը բոլոր նախկին իրանական տարածքներից: Դրա փոխարեն՝ 1803թ-ին ռուսները գրավեցին Ջարո-Բելոկանը և պաշարեցին Գյանջան՝ Կովկասում իրանական ազդեցության հենարանը: Շահը չհասցրեց օգնել Գյանջային, և 1804թ-ի սկզբներին ռուսները գրավեցին այն: Ի պատասխան՝ վելիահո Աբբաս-Միրզան հավաքեց 40 հազ-ոց բանակ և ռուսներին վերջնազիր ներկայացրեց՝ կամ նրանք դուրս կգան հարավային Կովկասից կամ նրանց սպասում է պատերազմ: Այսպես սկսվեց ռուս-իրանական 1804-1813թթ. պատերազմը: Ռուսական զորքերը հաղթանակներ տարան շնորհիվ հրետանու գերազանցության և տեխնիկական ավելի լավ հագեցվածության, սակայն Երևանի պաշարումը ձախողվեց. ռուսները չկարողացան գրավել բերդը¹⁴: Վելիահո Աբբաս-Միրզան անընդհատ տեղաշարժվում էր ողջ Կովկասով՝ ռուսներին հասցնելով շոշափելի հարվածներ: Սակայն, անգամ ռուսական բանակի հրամանատար գեներալ Պ.Դ. Յիցիանովի սպանությունը բարվեցի կառավարիչ Հուսեյին-Ղուլի խանի կողմից ի գորու չեղավ շրջել իրավիճակը հոգուտ իրանական ուժերի¹⁵: Ռուսները գրավեցին Գյանջան, դարաբաղը, Շիրվանը (Շամախին), Բաքուն և Թալիշը: 1808թ-ին ֆրանսիացիները գեներալ Գարդանի գլխավորությամբ օգնեցին Աբբաս-Միրզայի զորքերին երկրորդ անգամ հետ մղել ռուսական

զորքերին Երևանից¹⁶: 1811-1812թթ. ռուսները տարան մի քանի հաղթանակ և դուրս եկան Արաքսի ափեր: Շահական կառավարության նախաձեռնությամբ 1813թ-ին բանակցություններ սկսվեցին, որոնք ավարտվեցին հոկտեմբերին Գյուլիստանի հաշտության պայմանագրի ստորագրությամբ: Իրանը ստիպված էր ճանաչել կովկասյան 10 խանություններից 8-ի միացումը Ռուսաստանին: Հաջողվեց միայն Իրանի կազմում պահել Երևանի և Նախիջևանի խանությունները:

Այս պատերազմը բացահայտեց Իրանի ռազմական և տեխնիկական ողջ հետամնացությունը, և երկրի ներսում ավելի շատ ազնվատոհմիկ և հայտնի մարդիկ սկսեցին հակվել փոփոխությունների անխուսափելիության մտքին: Բարեփոխումներն սկսվեցին բանակից և անգլիացիների ու ֆրանսիացիների օգնությամբ արդեն 1826թ-ին շահական կառավարությունը գտավ, որ այն ի գորու է վերադարձնելու կովկասյան խանությունները: Վելիահո Աբբաս-Միրզան Երևանի խանության տարածքից սկսեց ռազմական գործողությունները: Այս պատերազմը ևս իրանական բանակի համար անհաջող էր, և ռուսները գրավեցին Երևանը (1827թ.), ապա և Արդեբիլը հյուսիսային Իրանում: Սպառնալիք ստեղծվեց Թեհրանի համար, և Ֆաթի-Ալի շահը 1828թ-ի հունվարին հրամայեց Աբբաս-Միրզային անհապաղ հաշտություն կնքել ռուսների հետ: 1828թ-ի Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանն իրեն միացրեց Երևանի և Նախիջևանի խանությունները՝ սահման դարձնելով Արաքս գետը¹⁷: Հաշտության կնքման գործում մեծ դերակատարություն ունեցան անգլիացի դիվանագետներ Դ. Մակդոնալդը և Դ. Մակ-Նեյլը, որոնք կարողացան նվազեցնել ռազմատուգանքի չափը 15 կուրորից մինչև 10 կուրուր (20 մլն ռուբլի արծաթով)¹⁸: Ռուսներին ռազմատուգանքի վճարման ծանր բեռը ազդակ հանդիսացավ փնտրտումներ սկսելու դուրս բերելու համար երկիրը ծանր տնտեսական և տեխնիկական հետամնացությունից: Երկրի սահմանները լայնորեն բացվեցին ռուսական ապրանքների համար, որոնց ներմուծումը շատ արագ հարված հասցրեց երկրի ողջ արհեստագործական արտադրությանը:

Օսմանյան Թուրքիայի հետ հարաբերություններն առանձնանում էին Իրանի ներքին գործերին այս երկրի կողմից շարունակ իրականացվող միջամտություններով՝ նպատակ ունենալով խլել նրա արևմտյան նահանգներն ու Զուրդիստանը: Երբ Իրանը պատերազմում էր Ռուսաստանի դեմ, թուրքերը Զերբեյլայում, Նաջաֆում և Սամարրայում արգելքներ էին ստեղծում շիա ուխտավորների համար, ինչպես նաև պարբերաբար ներխուժումներ

¹³ Эгбал Аббас. Тарих-е мофассалий-е Иран /Изд. Энтешарата Хайям. Би та (б.г.) Техран. с. 299; Маркова О.П. Россия, закавказье и международные отношения в XVIIIв. Москва, 1966. сс. 292-294.

¹⁴ Таджбахши А. Сиасатхаей-е эстемерай-е Русие тезари. Енглестан на Фарансе дар Иран. /Изд. Аббас Эгбал, Техран, 1363/1983, с. 182-183.

¹⁵ Ватсон Е.Г. Тарджомай-е Вахид Мазандарани. Тарих-е Иран-е доурей-е Каджарийе. //Изд. Симорг. Техран, 1354/1975. сс. 183-186.

¹⁶ Махмуд М. Тарих-е равабет-е Иран-е ва Энглис. Т. 1. Техран, 1341/1969. с. 196-197; Нафиси сайд. Тарих-е эджтемай-е ва сиаси-е Иран дар доуре-е моасер // Изд. Нашар-е боняд. Т. 2. Техран, 1368/1989. с. 143; Natchkebia I. La place de la Georgia dans le traite de Finkenstein / Ed. l'Harmattan. Paris. 2009. pp. 115-131.

¹⁷ Вахид Нийа. Гарардадхай-е доуран-е Гаджарий-е /Изд. Атайи. Техран, 1362/1983. с. 292; Балаян Б.П. Дипломатическая история русско-иранских войн. Ереван, 1988. с. 167-168; Акты КАК, Т. VII, ч. 2. Тифлис, 1875. Док. 340. с. 178-180л Док. 331. с. 165-166.

¹⁸ Хан Малек Сасани. Сиасатгаран-е гоуре-е Гаджари. /Изд. Этнешарат-е бабек. Техран, 1346-1352/1967-1973. Т.2. с. 183-184; Kazemzadeh F. Anglo-Iranian Relations. II. //Encyclopaedia Iranica. Ed. by E. Yarshater. Vol. II. London – New York, 1987, p. 48.

իրականացնում քրդական Չալան, Շեկակի, Խարկի և Միլանի ցեղերի հողերի վրա¹⁹: Սաղրազան Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարությունը ստիպված էր դժվարին բանակցություններից հետո լուծել Օսմանյան Թուրքիայի հետ արևմտյան սահմանների խնդիրը և միայն 1847թ-ին Էրզրումի պայմանագրով հաստատվեց այդ սահմանը:

Այնուհետև աշխատանքում քննարկվում են Իրանի փոխարարությունները Ֆրանսիայի և Անգլիայի հետ XIX դ-ի սկզբներին, որոնք առանձնապես էին այս տերությունների շահադիտական ծրագրերով և ոչ թե իրանական պետության ամբողջականությունն ու հզորությունը պահպանելու մտահոգությամբ: Քննարկվում են Անգլիայի հետ 1801 և 1809թթ. կնքված պայմանագրերը: Այս երկու պայմանագրերն էլ ուղղված էին Իրանը ստրկացնելուն և երկրի տարբեր շրջաններում անգլիական տիրապետության հաստատմանը: Անգլիայի և Ռուսաստանի քայլերը Իրանում XIX դ-ի սկզբներին շատ են մմանվում միմյանց, քանի որ այս երկու տերությունների նպատակները ևս նույնն էին²⁰: Նրանք ձգտում էին Իրանն ու նրա կառավարիչներին խաղաղ դարձնել իրենց ձեռքին:

Աշխատության երկրորդ գլխում տրվում է երկրում իշխանության մարմինների կառուցվածքի և հասարակական-քաղաքական իրավիճակի քննությունը առաջին երեք դաշարական շահերի օրոք (1796-1848թթ.), հողային սեփականության համակարգը երկրի տարբեր շրջաններում՝ նստակյաց և քոչվոր բնակչության մոտ: Հատուկ ուշադրություն է դարձվում շահնշահի տիտղոսի դերի, նշանակության և բովանդակության պարզաբանմանը իշխանության քաղաքական կառուցվածքում: Շատ առումներով շահնշահի տիտղոսի նշանակությունն ու մեծությունը նորից վերահաստատվեց Ֆաթի-Ալի շահի և Մոհամմադ շահի օրոք: Ուշադրություն է դարձվում ազնվականության տարբեր շերտերին և դրությանը, քաղաքային բնակչության դրությանը և քոչվոր ցեղերին, տարբեր «*դիվաններին*» (նախարարություններ) և առավել մանրամասն քննարկվում է «սաղրազան»-ի պաշտոնի և տիտղոսի էվոլյուցիան: Ներկայացվում է տարբեր սաղրազամերի՝ Հաջի Միրզա Աղասի Երևանցու նախորդների գործունեությունը այն նկատառումով, որ դրանք հնարավոր լինի համեմատել:

Առանձին բաժին է (2.3) նվիրված հողագործության և հողօգտագործման խնդիրներին: Աշխատության հեղինակը համամիտ է պատմաբան Ֆարիադ Նեեմանիի կարծիքին՝ հողատիրության 7 հիմնական ձևերի գոյության մասին՝ շահական կալվածք (պետական հողեր), խոշոր ազնվականության մյուլքեր, մանր հողատերերի թիուլներ և սոյուրգալներ, վաքըֆ, ցեղատարածքներ (արոտավայրեր), վարձակալական հողեր,

¹⁹ Дандамаев М.А., Грантовский Э.А. и др. Тарих-е Иран. / Изд. Пуйеш. Техран. 1369/1990. сс. 311-315; Matthee R. Anti-Ottoman concerns and Caucasian interests //Safavid Iran and Her Neighbors. Salt Lake City. 2003. pp. 119-124; Авари П. Тарих-е моасер-е Иран /Изд. Моасер-е матбуати-йе Атайи. Техран, 1363/1990. сс. 49-55.

²⁰ Andreeva E. Russia and Iran in the Great Game, London – New York, 2007. pp. 81-82; Matthee R. Anti-Ottoman concerns and Caucasian interests // Safavid Iran and Her Neighbors. Salt Lake City. Utah, USA. 2003. p. 106-107.

համայնական հողեր՝ ջամաթներ:²¹ Շատ հետազոտողներ, ուսումնասիրելով հողատիրության խնդիրը մինչև XIX դ-ի առաջին կես, հանգել են այն հետևության, որ առաջին երեք Ղաջար շահերի օրոք իրավիճակը քիչ է փոխվել և հիմնականում կրկնում էր ավանդական հին ձևերը:²² Չնայած քոչվորները չեն կարող հասնել բարձր քաղաքակրթական հաջողությունների, այնուամենայնիվ հետաքրքրական շրջանում և հատկապես հետմոնղոլական շրջանում քաղաքական պայքարում և շահական գահի համար նրանք հաճախ էին խաղում առաջնային դեր: Սակայն, Ղաջարներին չէր զոհացնում իրերի մման դրությունը և ֆաթի-Ալի շահի ու հատկապես Մոհամմադ շահի օրոք քոչվոր ցեղերի դերն ու նշանակությունը կտրուկ ընկնում է:

Իրանի տնտեսական զարգացումը XIX դ-ի առաջին կեսին առանձին քննարկվում է 3-րդ գլխում, քանի որ, տարբեր հետազոտողների, ինչպես նաև աշխատանքի գիտական ղեկավարի կարծիքով, այն ունի կարևոր նշանակություն՝ հասկանալու համար անհրաժեշտությունն այն բարեփոխումների, որոնք սկսվեցին Հաջի Միրզա Աղասի Երևանցու կողմից: Քննարկվում են կենտրոնի և մահանգայի կառավարիչների ներքին հարաբերությունները, դեպի Հերաթ ձեռնարկված արշավանքը (1829-1830 և 1833թթ.) և խռովությունները, որոնք սկիզբ առան մայրաքաղաքում ֆաթի-Ալի շահի մահից անմիջապես հետո (1834թ.): Այնուհետև քննարկվում է տնտեսական դրությունը երկրում 30-ական թթ-ին, առևտրական ուղիները Իրանից դեպի Ռուսաստան և Եվրոպա և ապրանքները (մետաքս, համեմունքներ, քաղցրեղեն, բամբակ, շաքար, ներկեր, ծխախոտ, թեյ, սուրճ), որոնք արտահանվում էին, առաջին մանուֆակտուրաների, ֆաբրիկաների և գործարանների հայտ գալը: Հենց այս շրջանում է սկսվում երկրի ներքին զարգացման նոր՝ արդյունաբերական փուլը: Երկրին չէր բավականացնում կապիտալը և ազնվականությունը վաճառականների հետ պակաս ցանկությամբ էին գումար ներդնում արդյունաբերության ոլորտում, իսկ ներդրվող միջոցներն էլ չնչին էին: Պահանջվում էր պետության միջամտությունը և նրա միջոցների ներգրավումը, բայց շատերը դա չէին գիտակցում և այդ խնդիրը ստիպված եղավ լուծել Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարությունը:

Վաճառականության մեծ մասը հանդիսանում էին *բազասները*՝ տարբեր փոքր վաճառականներ՝ սահմանափակ դրամական միջոցներով: Խոշոր վաճառականների թիվը, որոնց դրամական միջոցներն անցնում էին մի քանի տասնյակ հազար թումանից, մեծ չէր, ընդամենը մի քանի հարյուր հոգի ողջ Իրանում: Վաճառականական կապիտալը պատրաստ չէր մասնակցելու երկրի արդիականացմանը: Պետության զարգացման ճանապարհին հարկ էր անցնել երկար անցումային շրջան, ինչն էլ վիճակված էր անելու Մոհամմադ շահին և նրա սաղրազան Հաջի Միրզա Աղասի Երևանցուն:

²¹ Неемани Ф. Такамел феодализм-е дар Иран-е /Изд. Хорезми. Техран, 1358/1978, с. 146; Lambton A.K.S. Landlord and Peasant in Persia. London, 1953, p. 258.

²² Фешахи М.-П. Таквин-е сармайедари-е дар Иран. /Изд. Гугенберг, Тегран, 1352/1973. с. 192; его-же – Веласин джонбоеш-е горун-е воста дар доуран-е феодал. /Изд. Джавидан, Техран, 1356/1977. с. 163.

3-րդ գլխի երրորդ բաժնում քննարկվում են նոր գահակալի՝ Մոհամմադ շահի իշխանության գալու հանգամանքները և քաղաքական ուժերի հարաբերակցությունը պետության մեջ XIX դ-ի 30-ական թթ-ի կեսերին: Փաստացի պայքար էր ընթանում շահնշահի գահը ժառանգելու երկու սկզբունքների միջև: Առաջինը պայմանականորեն կարելի է կոչել ցեղային, քոչվորներին առավել բնութագրական, երբ գահը ժառանգվում էր ըստ ավագության: Երկրորդ սկզբունքը՝ ժառանգություն ըստ օրենքի կամ կտակի, որը բնութագրական էր ուժեղ կենտրոնացված իշխանություն ունեցող կայացած պետություններին: Խնդիրն այն էր, թե գահաժառանգության որ սկզբունքը կհաղթանակի քաղաքական պայքարում, ինչը Ղազարյանի հարստության համար ուներ կարևոր գաղափարական նշանակություն²³: Այս հարցի լուծումից էր կախված երկրի արդիականացման ընթացքն ու տեմպը, ինչն իրանական հասարակության մեծ մասի համար ակնհայտ դարձավ հատկապես ռուս-իրանական պատերազմներում կրած պարտություններից հետո: Մեծաթիվ շահադեներն ու արյունակից արքայազները վիճարկում էին Մոհամմադ-շահի գահը, սակայն Ջեյլի-սուլթանի դեմ հաջող պայքարից հետո նրան հաջողվեց խաղաղ ճանապարհով պայքարից դուրս մղել գահի մյուս հավակնորդներին: Արդեն 1835թ-ին նա սաղրագամ (կառավարության ղեկավար) նշանակեց իր նախկին ուսուցիչ և խորհրդատու Հաջի Միրզա Աղասի Երևանցուն:

Աշխատության 4-րդ գլուխը (էջ 93-163) նվիրված է Հաջի Միրզա Աղասի Երևանցու կյանքին, գործունեությանը, ի մասնավորի՝ մեծ տերությունների ծրագրերի դեմ պայքարի և բարեփոխական գործունեության էջերին: Այս նույն գլխում քննարկվում է բարեփոխության ձևավորումը և դրա դեմ պայքարը Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարության գործունեության սկզբնական շրջանում:

Այս գլխի առաջին բաժնում ներկայացվում է երիտասարդ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կրթության, ընտանիքի և դեզերումների մասին: Նա ծնվել է 1783թ-ին Շոքորե Սաադ բեգլարբեգության կենտրոն Երևան քաղաքում²⁴: Նա իրականացրել է ուղտագնացություն (հաջ) դեպի սրբավայրեր և ոչ մեկ անգամ երիտասարդ տարիքում այցելեց շիաների սրբազան քաղաքները Միջագետքում՝ Ղուն, Ջերբելա, Նեջաֆ: Նա ստացել է լավ մուսուլմանական աստվածաբանական կրթություն, երիտասարդ տարիքում տարվեց սուֆիական ուսմունքով: Ջերբելայում նա աշակերտեց ժամանակի ճանաչված շիա առաջնորդ Աբդ օլ-Սամադի Համադանիին: 1810թ-ին Մեքքա և Բեյթ-ալ-Մուքրադդաս (Երուսաղեմ) իրականացրած հաջից հետո նա հաստատվեց հարազատ Երևանում և մի քանի տարի անգամ աշխատեց Էջմիածնի հայոց

կարողիկուսարանի ղեկավարում:²⁵ Կարելի է ենթադրել, որ աշխատելով կարողիկուսական ղեկավարում նա ուսումնասիրել է հայոց լեզուն:

1818թ-ից նա տեղափոխվում է Խոյ և մի քանի տարի անցկացնելով այնտեղ՝ 1821-ին տեղափոխվում է Թավրիզ՝ որջ հյուսիս-արևմտյան Իրանի մայրաքաղաք: Այստեղ նա կարճ ժամանակում հռչակ է ձեռք բերում որպես սուրբ գրքերի և սուֆիականության գիտակ և շուտով հրավիրվում է Թավրիզի հայտնի և հարուստ բնակիչներից մեկի՝ Միրզա Բոգորզի կողմից, որպես վերջինիս որդու տնային ուսուցիչ²⁶: Միրզա Բոգորզի տանը նա ծանոթացավ վախառդ և Աղրբեջանի բեգլարբեգ Աբբաս-Միրզայի հետ և շուտով դարձավ նրա որդի Մոհամմադի՝ Իրանի ապագա շահի ուսուցիչն ու դաստիարակը: Տասը տարի անց ուսուցչի և աշակերտի բարեկամությունն ու փոխադարձ համակրանքը Հաջի Միրզա Աղասի Երևանցուն բերեց իրանական կառավարության սաղրագամի բարձր պաշտոնին: Մեծատոհմիկ իրանցիները, արքայազները (շահադե) և շահական արքունիքի պաշտոնյաները երկար ժամանակ չէին կարողանում ներել նրա հասարակ ծագումը, հարաբերվելու, հագուստի պարզությունը և սակավապետ կյանքը:

Սաղրագամի պաշտոնում նշանակվելուց հետո Հաջի Միրզա Աղասի Երևանցին կտրուկ ավելացրեց ուլեմների և դերվիշների ազդեցությունը արքունիքում: Մի քանի հեղինակներ հակված են կարծելու, որ Մոհամմադ-շահի օրոք հենց սաղրագամն էր երկրի փաստացի կառավարիչը²⁷: Կարելի է նշել, եվրոպացի հեղինակների (հատկապես՝ անգլիացի) մեծամասնությունը արդարացի չէր Հաջի Միրզա Աղասի Երևանցու անձի և դերակատարության գնահատման գործում՝ նրա մասին արտահայտվելով բացառապես բացասաբար²⁸: Բայց, մեր կարծիքով դա պայմանավորված էր Իրանը ստրկացնելուն ուղղված մեծ տերությունների վարած քաղաքականության դեմ նրա հակաբայելով: Իրենց գրքերում փնտլելով Հաջի Միրզա Աղասի Երևանցուն՝ եվրոպացի հեղինակները հույս ունեն այդ կերպ վարձախատույց լինել նրան՝ քաղաքականության մեջ իր հայրենասիրական դիրքորոշման համար: Հենց Հաջի Միրզա Աղասի Երևանցին էր, որ սաղրագամի պաշտոնում գտնվելու առաջին իսկ օրերից կտրուկ իջեցրեց քոչվոր ցեղերի առաջնորդներին և շահական արքունիքի մեծաթիվ պաշտոնեությանը վճարվող թոշակներն ու վճարները, որջ ազնվականությունից պահանջեց գուսպ լինել ծախսերի մեջ և հրաժարվել ճոխություններից ու շռայլությունից, հսկայական հարեմներից և անհամար սպասավորներից: Փոխարենը՝ նա հրամայեց վճար նշանակել դերվիշներին և ախունդներին, մի քանի մոլլաների և մեդրեսեների

²⁵ Абади Моалем Хаджиб М.А. Макарем ал-асар дар ахвал-е Каджарийе. /Б.м. (без места) 1377/1998. с. 77; Панох Х. Карнаме-е ва замане Хаджи Мирза Агаси //Фасл-намеюе гофтегу, No. 25, Тегран, 1377/1999. с. 279.

²⁶ Абади Моалем Хаджиб М.А. Макарем ал-асар дар ахвал-е Каджарийе. 1377/1998. с. 79.

²⁷ Algar H. Religion and State in Iran. 1785-1906, Berkeley – Los Angeles. 1969, p. 37; Эгбал Аббас. Мирза Таги-хан Амир Кабир /Изд. Тус. Тегран, 1363/1984. с. 343.

²⁸ Сайкс Сир Перси. Тарих-е Иран. /Изд. Дония кетаб. Т. 2. Тегран, 1363/1984. с. 474; Ватсон Г.Р. Тарих-е Иран доуре-е Каджарийе. /Изд. Симорг. Тегран, 1354/1975, с. 379; Хинлез Д. Шенахт-е асатир-е Иран /Изд. Кетабсарайе бабол нашар-е чешме. Тегран, 1371/1995. с. 176.

²³ Азуд ад-Доуле Солтан Ахмед Мирза. Тарих-е Азуди /Изд. Наваи, Тегран 2535ю1355/1976. сс. 124-126.; Реза Голи Мирза. Сафарнамеи-е Реза Голи Мирза /Изд. Этнешарат-е данешгах-е. Тегран, 1346/1967, сс. 7-8.

²⁴ Эттемад ос-Салтане М. Садр ат-таварих /Изд. Рузбеха, Тегран 1357/1967. с. 152; Amanat A. Agasi Hajji Mirza Abbas Iravani // Encyclopaedia Iranica. Vol. II. London – New York, 1987, p. 183.

մուղարբիսներին: Ազնվականությունը դժգոհ էր, սակայն Մոհամմադ շահի անվերապահ աջակցությունը թույլ չէր տալիս նրանց բարձրաձայն արտահայտելու իր դժգոհությունը սաղրագամից: Փոխարենը, երբ շահը մահացավ 1848թ-ին, ողջ Թեհրանի ազնվականությունը և բազմաթիվ շահագոյներ անմիջապես դիմեցին Անգլիայի և Ռուսաստանի դեսպաններին՝ հեռացնելու սաղրագամին իր պաշտոնից: Պաշտոնագրոված Հաջի Միրզա Աղասի Երևանցին թույլտվություն խնդրեց մեկնելու շիաների համար սրբազան Նեջաֆ քաղաքը և 1848թ-ի դեկտեմբերին հեռացավ Իրանից: Մեկ տարի անց նա այնտեղ էլ մահացավ:

4-րդ գլխի երկրորդ բաժնում քննարկվում է Աղա-խան Մահալլաբիի՝ Իրանում վերածնունդ ապրող իսմայիլականության առաջնորդի ապստամբությունը: Այս շրջանում Իրանի բազմաթիվ քաղաքներում, Բրիտանական Հնդկաստանում (Պակիստան) և Աֆղանստանում ձևավորվում են իսմայիլականների գաղտնի համայնքներ: Աղա-խանը գտնվում էր անգլիացիների ազդեցության ներքո և մատակարարվում նրանց կողմից:

1837-1838թթ-ին Աղա-խանը առաջին անգամ հանդես եկավ թեհրանյան կառավարության դեմ և Իրանի բոլոր ողբերգությունների մեջ մեղադրեց Հաջի Միրզա Աղասի Երևանցուն: Նա գործում էր անգլիացիների թելադրանքով և դա ակնհայտ էր երկրում շատերի համար: Այդ իսկ պատճառով՝ նրա ելույթը աջակցություն չգտավ, իսկ ինքը՝ Աղա-խանը, փախավ Խորասան, իսկ այստեղից՝ Բրիտանական Հնդկաստան:²⁹ 1841թ-ից սկսած Աղա-խանը գլխավորեց Բոմբեյի իսմայիլականների համայնքը: Հենց այստեղ էլ Աղա-խանի մոտ ծագեց Բելուջիստանը Իրանից անջատելու ծրագիրը, ինչը հավանության արժանացավ անգլիացիների կողմից: Նրա փորձը՝ անգլիական զորքերի օգնությամբ հաստատվելու Բելուջիստանում 1843թ-ին, տապալվեց. Թեհրանից ուղարկված Ֆազլ-ալի խանի զորքը Ալի-խան Բելուջիի բելուջիական ուժերի հետ համատեղ ջախջախեցին Աղա-խանի հնդիկ վարձկանների զորքերին, որոնց առաջնորդում էին անգլիացի հրահանգիչ-սպաները, և դուրս մղեցին Բելուջիստանի տարածքից: Այս բոլոր անցքերին ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել սաղրագամ Հաջի Միրզա Աղասի Երևանցին: Նա մշտապես բողոքի մոտաներ էր ուղարկում Հնդկաստանի անգլիական իշխանություններին՝ մեղադրելով նրանց Իրանի սերբին գործերին միջամտելու և Բելուջիստանը Իրանից պոկելու դավադիր ծրագրերի մեջ: Նա հղում էր 1809 և 1814թթ-ի անգլո-իրանական պայմանագրերի համապատասխան դրույթները և պահանջում էր իրանական իշխանություններին հանձնել Աղա-խանին:³⁰ Այսպես Աղա-խանի անջատողական ելույթների դեմ իր պայքարով սաղրագամ Հաջի Միրզա Աղասի Երևանցին պաշտպանեց Իրանի ազգային շահերը և կանխեց Բելուջիստանի անջատումը: Պարտություն կրելով Բելուջիստանում՝ իսմայիլականների համայնքը սկսեց զբաղվել բարեգործությամբ հատկապես

Բոմբեյում և Կանադում (ուր և առայսօր գտնվում են իսմայիլականության կենտրոնները) և այնուհետև չլիորձեցին ապստամբություններ հրահրել Իրանում³¹:

4-րդ գլխի երրորդ բաժնում քննարկվում են 1837-1838թթ-ի Հերաթյան պատերազմի իրադարձությունները և դրանցում անգլիացիների հակաիրանական դիրքորոշումը: Հերաթը մշտապես ձգտում էր ընդգրկվել Իրանի կազմում և դեռևս Սեֆյանների ժամանակ համարվում էր իրանական պետության ծայրամասը: հերաթի կառավարիչ Քամրան-Միրզան դադարեց Թեհրան հարկ ուղարկել և իրեն անկախ հռչակեց: Շատերը կարծում են, որ Ռուսաստանը 30-ական թթ-ին դրդում էր Իրանին արշավելու Հերաթ և Աֆղանստանի այլ շրջաններ, դրանով իսկ ձգտելով վնասել անգլիացիներին:³² 1837թ-ին Մոհամմադ-շահը սկսեց արշավանքը դեպի Հերաթ, ինչն առաջացրեց անգլիացիների խորը մտահոգությունը և նրանց կտրուկ հակազդեցությունը: Միջամտելով այս զարգացումներին՝ նրանք պահանջեցին վերացնել Հերաթի պաշարումը և Հերաթի շրջանից դուրս բերել իրանական զորքերը: Հերաթի պաշտպանությունը իրականացնում էր Է. Փոթթիմշեթը՝ մի խումբ անգլիացի սպաների հետ միասին: Նա գաղտնի տեսակցեց սաղրագամ Հաջի Միրզա Աղասի Երևանցուն հետ և հյուսիսային Հնդկաստանի մոտուլման բնակչության անունից պահանջեց անհապաղ հեռանալ Աֆղանստանից: Ի պատասխան՝ Հաջի Միրզա Աղասի Երևանցին ճամբարային վրանում բացեց քարտեզներ, որոնք արվել էին անգլիացի Ա. Բյորնսի կողմից, որոնց վրա Հերաթի շրջանը նշված էր որպես իրանական տարածք: Այնուհետև նա հանեց 1809 և 1814թթ-ի պայմանագրերի տեքստերը և դրանք կարդալով Փոթթիմշեթին՝ հայտարարեց, որ իրանական բանակը գործում է իր տարածքում և Անգլիայի հետ որևէ պայմանավորվածություն չի խախտում: Նման բովանդակությամբ նամակ ուղարկվեց Հերաթից Լոնդոն՝ լորդ Փալմերսթոնին: Ի պատասխան անգլիացիները ուղարկեցին դեսպան Մաքնեյլին՝ համոզելու համար իրանցիներին վերացնելու Հերաթի պաշարումը և խոստանալով դրանական փոխհատուցում: Որպեսզի համոզեն իրանական կառավարությանը անգլիացիները գրավեցին Մոհամմեթու նավահանգիստը Քարուն գետի վրա, Խարթ կղզին Պարսից ծոցում և ափ իջեցրին 2.000-ոց զորաջոկատ:³³ Նման պայմաններում 1838թ-ի օգոստոսին Մոհամմադ-շահը իրանայեց դադարեցնել Հերաթի պաշարումը և զորքերը վերադարձնել Իրան: Քամրան-Միրզայի հետ սկսվեցին հաշտության բանակցություններ: Հաջի Միրզա Աղասի Երևանցին պահանջեց փոխհատուցել զորքի վրա կատարված ծախսերը 3 մլն արծաթ թումանի չափով, և անգլիացիները համաձայնվեցին դրան: Սակայն Քամրան-Միրզան հրաժարվեց վճարել, թեև ընդունեց շահի գերիշխանությունը և խոստացավ վերականգնել տարեկան հարկերի վճարումը: Անգլիացիները համոզված էին, որ Հաջի Միրզա Աղասի Երևանցին հերաթյան

²⁹ Ivanov W. Brief Survey of the evolution of Ismailism. Leiden – Brill, 1952, pp. 132-133; Гекертон Ч.У. Тайные общества всех веков и всех стран. М. 1994. с. 221.

³⁰ Райн Э. Хорухе бегран-е Енглиси дар Иран /Изд. Джавидан. Техран, 1362/1982. сс. 342-345; Махмуд М. тарих-е раввабет-е Иран ва Енглис. /Изд. Эгбал. Т. 2. Техран. Т. 1-8. 1341-1344/1969-1973. с. 523.

³¹ Васильев Л.С. История религии Востока. М., 2006. с. 432-433; Гекертон Ч.У. Тайные общества. М. 1994. с. 231.

³² Акты КАК. Изд. Канцелярии Наместника Кавказа. Т. 8. Тифлис. 1881., Док. 874; Риштия Сеид Касем. Афганистан в XIX веке. М. 1958. с. 157.

³³ Кей В. Тарих-е джагаушай-е Афганистан. Т. 1. / Изд. Этнешарате китаб. Энзели, 1369/1990. с. 375.

իրադարձությունների ժամանակ գործում էր ռուսների ցուցումներով, և լորդ Փավերթսոնը այդ մասին բացահայտ հայտարարեց իրանական ղեսպանությանը 1840թ-ին:

Հաջի Միրզա Աղասի Երևանցին փորձում էր մշտապես օգտագործել Ռուսաստանին Անգլիայի դեմ և Անգլիային՝ Ռուսաստանի դեմ, վարելով մեծ տերությունների միջև խուսափված քաղաքականություն:

4-րդ գլխի չորրորդ բաժինը վերաբերում է Ռուսաստանի հետ փոխհարաբերություններին իրանական շահերի հետևողական պաշտպանությանը նրա հետ դիցանագիտական պայքարում: Անգլիան խոստացավ փոխառություն տրամադրել Իրանին, եթե նա Ռուսաստանի հետ սկսի երրորդ պատերազմը, բայց Հաջի Միրզա Աղասի Երևանցին չտրվեց այդ սադրանքին, քեև չդադարեց բանակցել փոխառությունների շուրջը: Ինչպես հայտնի է, 1829թ-ից հետո տասնյակ հազարավոր հայեր և ասորիներ Իրանից տեղափոխվեցին Հայաստան: Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարությունը սկսեց հայերին համոզել վերադառնալ Իրան, քանի որ հետաքրքրված էր նրանց առևտրական կարողություններով: Այդ քայլերը արդյունք տվեցին. XIX դ-ի 40-ական թթ-ին 5 հազ. հայեր վերադարձան Թավրիզ և Թեհրան³⁴: Հաջի Միրզա Աղասի Երևանցին վճռականորեն պայքարում էր Էնգելի և Ռեշտ ռուսական նավերի մուտքի դեմ և ռուսական իշխանություններից պահանջում էր համաձայնեցված գործողություններ քուրքմենական ցեղերի դեմ: Նա առաջինը ռուսական իշխանություններին ներկայացրեց իրանական ափերի մոտ թառափի որսի և սև ձկնկիթի համար արտոնագրեր ստանալու պահանջը: Ճիշտ է՝ նա ստիպված էր համաձայնել Թավրիզում, Ղազվինում, Էնգելիում և Աստրավադում հիվանդանոցներ կառուցելու ռուսների պահանջի հետ: Փոխարենը՝ նա ռուսական իշխանություններից հասավ Իրան ռազմական խորհրդակցանքեր ուղարկելուն՝ կոմս Օ. Միսնոնիչի և գեդապես Ի. Բլարամբերգի գլխավորությամբ: Նա հասկանում էր, որ ռուսները հետապնդում են իրենց սեփական շահերը և իրանական հողում նրանց հաստատվելու դեմ պայքարել կարելի էր միմիայն նրանց անգլիացիներին հակադրելով: Բայց, միաժամանակ կարծում էր, որ դա պետք է արվի բացառապես խաղաղ միջոցներով, առանց պատերազմելու:

4-րդ գլխի հինգերորդ բաժնում քննարկվում են Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարության ձեռնարկումները մշակույթի բնագավառում: Նա առաջինն էր, որ սկսեց հայտնի ընտանիքներից սերող երիտասարդներին ուղարկել Եվրոպա՝ կրթություն ստանալու: Նրանցից մեկը՝ Միրզա Սալեհ Շիրազին, կառավարության օգնությամբ Եվրոպայում գնեց երկու տպագրական մեքենա թերթերի համար և 1837թ-ին կազմակերպեց «Լաջարե աքբար» թերթի հրատարակությունը³⁵: 1836-ից Թեհրանում գործում էր առաջին տպագրատունը, իսկ մինչև 1845թ-ը տպագրատներ բացվեցին նաև Սպահանում, Ուրմիայում և երկրորդը՝ Թեհրանում: Սկսվեց պարսկերեն լեզվով գրքերի տպագրությունը՝ տեխնիկական ձեռքբերումների, պատմության

և մշակույթի, քիմիայի և ֆիզիկայի մասին՝ թարգմանված ֆրանսերենից կամ անգլերենից: 40-ական թթ-ին ֆրանսիական լուսավորության նախարարությանը հղված իր նամակներում և դիմումներում սադրազամը ոչ մեկ անգամ խնդրում էր ընդունել իրանցի ուսանողներին սովորելու ոչ միայն փարիզում, այլև ցանկացած նահանգային համալսարանում և ապահովել նրանց անվճար կացարանով: Հաջի Միրզա Աղասի Երևանցին առաջինը Իրանի պատմության մեջ, երբ դպրոցներում հազարավայելներ շարունակ գործում էր մարմնական պատժի միջոցները, հանդես եկավ բոլոր մեղքեսներում դրանք արգելելու պահանջով, արգելելով նաև բանտարկյալներին ենթարկել կտտանքների: Նա աջակցում էր տասնյակ նոր մեղքեսների կառուցմանը շահական զանձարանի միջոցների հաշվին, թռչակներ նշանակեց և վճարներ սահմանեց երկրում մի քանի հազարի հասնող դերվիշներին, մուլաներին, ախունդաներին, սեղիներին, բոլիբներին: Աղա-Մոհամմադ խանի կողմից վաքըֆների բռնագրավումից հետո հակառակը՝ վերադարձրեց շատ վաքըֆներ դրանց նախկին տերերին և անգամ ընդարձակեց դրանք թիվը:

Այս նույն գլխի վեցերորդ բաժինը վերաբերում է Հաջի Միրզա Աղասի Երևանցու տնտեսական քաղաքականությանը, որն ուղղված էր գյուղատնտեսության զարգացմանը, մանր և միջին առևտրի խթանմանը, նոր ջրանքների և քյահրիզների անցկացմանը, լքված և անայի հողերի վերակենդանացմանը, իսկ 1836թ-ից սկսած՝ սկսեցին կազմել «Ի-աֆթարե խալեստե»-ն՝ «(մշակվող) բոլոր հողերի մատչյալ, իսկ անհնազանդ ֆեոդալների և ազնվականների հողերը բռնագրավվում էին հօգուտ զանձարանի: Նրա՝ իշխանության գտնվելու տարիների ընթացքում հօգուտ զանձարանի բռնագրավվեցին 1438 կալվածքներ³⁶:

Նույն գլխի յոթերորդ բաժնում առանձին քննարկվում է սադրազամի վարած քաղաքականությունը արդյունաբերության և արհեստագործության բնագավառում, այն արգելապատնեղները անգլիական և ռուսական մանուֆակտուրային արտադրանքի դեմ, որը մտավ Իրան 1830թ-ից հետո: Եվրոպական էժան ապրանքների այս հոսքը հանգեցրեց տասնյակ հազարավոր դերձակների և այլ արհեստավորների սնանկացմանը: Մադրազամը ահավ այն բանին, որ հարկերից ազատվեն դերձակները, զինագործները, մետաղագործները, ածխահատները, շաքար և քաղցրեղեն արտադրողները ևն, եթե նրանք իրենց ապրանքը իրացնում էին երկրի ներսում: Նա հասավ արդյունաբերության մեջ նոր աշխատատեղերի բացմանը. մի քանի հազար աշխատատեղեր բացվեցին 40-ական թթ-ին: Իհարկե, Իրանում գերիշխում էին արհեստագործական արդյունաբերությունը, սակայն շուտով ի հայտ եկան նաև առաջին ֆաբրիկաները³⁷:

³⁶ Сайф Ахмад. Эгтесад-е Иран дар гарн-е нуздахом /изд. Чашме. Техран. 1373/1994. с. 67; Hambly G.R.G. Iam during the reigns of Fath-Ali Shah and Mohammad Shah //The Cambridge History of Iran. Vol. 7, Cambridge. 2008. pp. 159-164.

³⁷ Дешахи М.-П. Таквин-е сармайдари-е дар Иран. /Изд. Гутенберг, Тегран, 1352/1973. с. 45, 57, 61; Мамедова Н.М. Городское предпринимательство в Иране. М., 1988. с. 101-119; Кузнецова Н.А. Иран в первой половине XIX в. М., 1983, с. 129-131.

³⁴ Waterfield R. Christians in Persia: Assyrians, Armenians, Roman Catholics and Protestants. London. 1973, p. 80; Issawi Ch. The Economic History of Iran. Chicago. 1971. p. 21-22.

³⁵ Табатабайи М. Тарик-е тахлил-е матбуат-е Иран /изд. Баасат. Техран, 1366/1987. сс. 46-49.

4-րդ գլխի ութերորդ բաժինը նվիրված է 30-40-ական թթ-ի առևտրական հարաբերությունների զարգացման հարցերին: Առևտրական բալանսը Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Բելգիայի, Շվեդիայի և այլ երկրների հետ անհամաչափ էր. այս երկրներից ներմուծվում էր հարյուրավոր անգամ ավելի շատ արտադրանք, քան արտահանվում էր: Ատենախոսության հեղինակը կազմել է Իրանից տարբեր ուղղություններով ձգվող առևտրական կապերի 12 աղյուսակներ, որոնցից ակնհայտ է դառնում արտահանման համեմատ ներմուծման ունեցած ճնշող առավելությունը: Աղյուսակները բերվում են ատենախոսության տեքստին կից հավելվածում³⁸:

Քննարկվող գլխի իններորդ բաժնում քննարկվում են բաբիական շարժման ձևավորման խնդիրները և դրա նկատմամբ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարության ունեցած վերաբերմունքը:

Աղասին՝ Ալի-Մոհամմադ Շիրազին, որն ընդունել էր Բաբ անունը («դռներ, որոնց միջով երկիր կիջնի Մահդի-Մեսիան»), ծնվել է 1810թ-ին Շիրազ քաղաքում: Նա սուֆիականություն է սովորել տարբեր հեղինակավոր շեյխերի և սեիդների մոտ և 1844թ-ին Շիրազում իրեն հայտարարեց Բաբ, իսկ շատ շուտով Երկրի վրա հայտնվելու էր և Մահդին: Բաբը իր վրա վերցրեց մարդկանց և Մահդիի միջև հարաբերություններում միջնորդի գործառույթը: Բաբը գլխավոր արժեք հայտարարեց կյանքում մարդկանց լիարժեք հավասարությունը, որի համար հարկ էր անընդհատ բարիք գործել երկրի վրա: Հասարակ մարդկանց բալանը և ստորացումները նա հայտարարեց սարսափելի հանցագործություն³⁹: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ Բաբի ելույթներն ու քարոզները, նրա «Բեյան» գիրքը հսկայական հաջողություն ունեցան հարավային, հյուսիս-արևմտյան և արևմտյան Իրանի քաղաքային և գյուղական բնակչության շրջանում:

Իր գրավոր աշխատանքներում և բանավոր խոսքում Բաբը փորձում էր հիմնավորել մուսուլմանական համայնքը պարբերաբար բարձրացնելու անհրաժեշտությունը: Նրա այս մտքերում բազում աղքատ և ունեզուրկ մարդիկ ապագայի նկատմամբ հույս էին տեսնում, ապագա փոփոխությունները դիտում աստվածահաճո գործ: Բաբը իր քարոզներում խոսում էր շահի իշխանության ապօրինության մասին և Ղաջարների հարստության իշխանության միակ ճիշտ լուծում էր համարում իշխանությունը խաղաղ կերպով Բաբի կողմնակիցներին հանձնելը: Բայց մարդիկ ի գորտ չեն փոխելու իրենի ստեղծված դրությունը և անհրաժեշտ է դրան Աստծո միջամտությունը, որն իր կամքը արտահայտելու է երկիր ուղարկված իր առաքյալի՝ Մահդիի միջոցով: Բաբը խնդում էր, որ հասել է երկիր նոր Մահդիի գալու ժամանակը, իրեն հայտարարելով որպես այդպիսին⁴⁰: Բաբը մարդկանցից պահանջում էր

բարիք գործել, իսկ իր գլխավոր նպատակ էր հայտարարել բոլորի լիարժեք հավասարությունը: Նա դատապարտում էր քարավանների կողոպուտը, առաջարկեց կանանց իրավունքները հավասարեցնել տղամարդկանց իրավունքներին: Բաբը վստահ էր, որ իր ուսմունքը շուտով կտարածվի ողջ աշխարհով մեկ, բայց առաջինը այն կրնալունեն Պարսքն ու Խորասանը, Մազինդարանը և Գիլանը: Հետագայում նա շարադրեց իր ուսմունքի հիմունքները սրբազան «Բեյան» գրքում, արդեն գտնվելով բանտարկության մեջ Մակվի բանտում: Բաբը իր քարոզներում լայնորեն օգտագործում էր քվային կողեր, որոնց համաձայն քաղաքների և տեղանքների անվանումները տրվում էին քվային արժեք ունեցող տառերով: Լիսան օլ-Մոլքը (Մեփեթր) գրում էր, որ Բաբը մտորեց դերվիշական խիստ կենսաձևը և շատ զուսպ էր սննդի և հաճույքների մեջ, բայց միաժամանակ հաճախ էր ընկնում ջեզը՝ հոգեկան գրգռում, որը հանգեցնում էր էքստազի, երբ բազմահազարանոց ամբողջը կախարդված լսում էր նրան, թեև արտաբերած խոսքերի մեծ մասը միանգամայն անհասկանալի էր նրա հետևորդներին⁴¹:

1844թ-ին Շիրազում կրոնական հեղինակությունների հետ բանավեճից հետո Բաբը ձերբակալվեց: Բանտից նա անմակոլ դիմեց Սպահանում շահի փոխարքա Մանուչեհր-խան Մոթամիդ աղ-Ղոուլին՝ նրանից պաշտպանություն խնդրելով: Մանուչեհր-խանը քիֆիսեցի հայ էր, որը գեթի էր ընկել 1795թ-ին Աղա-Մոհամմադ խանի արշավանքի ժամանակ և Թեհրանում արել էր անհավատալի կարիերա. Սկզբում նա դարձավ շահական պալատի ներքինի, ապա Գիլանի կառավարիչ և 40-ական թթ-ին՝ Սպահանում շահի փոխարքա: Նա Իրանում ազդեցիկ և հարուստ հայ էր, լավ ուսանել էր իսլամի հիմունքները և նրա տարբեր ուղղությունները: Մանուչեհր-խանը Սպահանում կազմակերպեց իր և Բաբի գաղտնի հանդիպումը և նրա հետ ժամեր տևած գրույցից հետո որոշեց, որ նրա ուսմունքը վտանգ չի սպառնում պետության համար և անգամ կարող է օգտագործվել շահի ազդեցությունը հարևան երկրներում տարածելու համար: Այդ մասին էլ նա գրեց շահին և սաղազան Հաջի Միրզա Աղասի Երևանցուն: Ըստ երևույթին՝ այդ մտքերը համընկան բաբիականության մասին Հաջի Միրզա Աղասի Երևանցու սեփական հայացքների հետ և նա որոշեց Բաբին ուղեկցելով շարունակել պահել Սպահանում, մինչև պատեհ ժամանակը գա: Ժամանակակից իրանցի պատմաբանների մի մասը մեղադրում է Հաջի Միրզա Աղասի Երևանցուն Բաբի հանդեպ ունեցած սխալ դիրքորոշման համար և նաև այն բանում, որ նա անմիջապես չհրամայեց մահապատժի ենթարկել նրան: Բայց Հաջի Միրզա Աղասի Երևանցին լավ գիտեր իր ժողովրդին, նրա կրոնասիրությունը և գիտեր, թե ինչ դժգոհության արժեք կբարձրանա Բաբին մահապատժի ենթարկելու դեպքում: Այդ իսկ պատճառով, երբ 1847թ-ին մահազավ Մանուչեհր-խանը, նա հրամայեց Բաբին գաղտնի բերել Թեհրան: Այդ մասին իմացան ճանաչված ուղեկցիչ և պահանջեցին Բաբին մահապատժի ենթարկել: Հաջի Միրզա Աղասի Երևանցին վճռեց Բաբին թաքցնել Մակվի բանտում: Այստեղից Բաբը անմակոլ էր գրում շահին և սաղազամին՝ նրանց առաջարկելով իր

³⁸Նայել հավելված՝ էջ 180-186:

³⁹Кашани Х.М.Д. Кетабе Нуктат уль-Каф фи тарих-е Бабие. Лехден-Брилл. 1910, сс. 112-115.; Эттемад ос-Солтане. Фетне-е Баб /Изд. Этнешарат-е бабек. Техран, 1351/1372, с. 14; Смирнов К.Н. Персы. Очерк религий Ирана. Тифлис, 1916. с. 155; Arjomand S.A. The Shadow of God and the Hidden Imam, Chicago, 1984, p. 239.

⁴⁰ Эттемад ос-Солтане. Фетне-е Баб /Изд. Этнешарат-е бабек. Техран, 1351/1372, с. 14; Browne E.G. The Bab of Persia. I. // JRAS T. 21. London. 1889, pp. 487-490; [Хамадани Мирза Хусейн] Tarichi Jadid of New History of Mirza Ali Mohammad the Bab. Trans. From Persian by E.G. Browne. Cambridge, T. XIII, 1893, pp. 29-30.

⁴¹ Лисан ол-Молк (Сепехр). Насех ат-Таварих. Т. 3. Техран, 1353/1974. сс. 48-53л. Наджафи М.Б. Бехайат (Бехайны) /Изд. Кетабхан-е тахвари. Техран. 1367/1988. с. 162-163.

օգնությունը և դաշնակցությունը: Ռուսական դեսպան Դ. Դոլգորուկովը պահանջեց Բաքին հնարավորինս հեռու պահել ռուսական սահմաններից, այլապես նա կապակայունացնի հարավային Կովկասի մուսուլման բնակչությանը⁴²: Բաքին բերեցին Ուրմիայի մոտ ընկած Չիխրիխա ամրոցը, իսկ այնուհետև՝ Թավրիզ: Այստեղ 1848թ-ի գարնանը կրոնական բանավեճ-դատավեճում, վախահոյ նասր աղ-Դինի ներկայությամբ նա կրկին իրեն հռչակեց Մահդի: բանավեճի բոլոր մասնակիցները պահանջեցին նրան մահապատժի ենթարկել՝ հայտարարելով նրան հերետիկոս:

Բայց այստեղ նրա ճակատագրին կրկին միջամտեց Հաջի Միրզա Աղասի Երևանցին և պահանջեց նրան ետ տանել Չիխրիխայի ամրոց: 1848թ-ի գարնանը կազմակերպվեց Բաքի դեմ թվով երրորդ դատավարությունը, նրան կրկին հայտարարեցին հերետիկոս, իսկ Հաջի Միրզա Աղասի Երևանցին կրկին փրկեց նրան՝ քաջ գիտակցելով, թե դա ինչով կարող է ավարտվել: Բայց հենց որ 1848թ-ի օգոստոսին մահացավ Մոհամմադ շահը, իսկ սեպտեմբերին Հաջի Միրզա Աղասի Երևանցին հեռացավ սաղրագամի իր պաշտոնից, 1850թ-ի հուլիսին Բաքը գնդակահարվեց Թեհրանում բազդարանի՝ քրիստոնեաներից կազմված գնդի զինվորների կողմից: Ինչպես և կանխատեսել էր Հաջի Միրզա Աղասի Երևանցին, նրա մահապատիժը առաջ բերեց բնակչության մեջ բուռն հուզումներ, որին հաջորդեց 1850-1852թթ-ի ապստամբությունը: Նասր աղ-Դին շահի կառավարությունը օգնության կանչեց հարավի քոչվորներին՝ բախտիարներին, լուրերին, արաբներին, որոնց ուժերով էլ մեծ դժվարությամբ ճնշեց ապստամբությունը: Բաքիականների հակառակորդները նշում էին նրանց բարձր մարտական ոգու և ինքնագոհողության պատրաստակամության մասին⁴³: Պետք է ընդունել, որ բաքիական շարժումը անհնարին կլիներ, եթե չլիներ ազատականացումը, կտանալների վերացումը, նորամուծությունները դատական համկարգում և այլն, որոնք իրականացրեց Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարությունը: Թեև ակնհայտ է և այլն, որ Բաքին և նրա ուսմունքը փորձեցին օտարազորով Անգլիայի և Ռուսաստանի դեմ պայքարելու համար, ինչն անհաջողությամբ ավարտվեց:

4-րդ գլխի 11-րդ բաժնում քննարկվում է Եվրոպայից և ԱՄՆ-ից եկած միսիոներների գործունեությունը և Հաջի Միրզա Աղասի Երևանցու կողմից նոր դպրոցների հիմնադրումը Իրանում: Պարկինսի, Սմիթի և Դուլիետի միսիոներական առաքելությունները բողոքականություն էին քարոզում Ուրմիայի, Մարաղայի և Թավրիզի հայերի և ասորիների շրջանում: Ֆրանսիացի Է. Բորեն հիմնադրեց ավելի քան 10 միսիոներական կաթոլիկական դպրոցներ հյուսիս-արևմտյան Իրանի քրիստոնյա բնակչության համար: Մակայն, բողոքականությունը դժվար էր հաստատվում ասորիների և հայերի շրջանում, թեև Պարկինսը հրատարակեց անգամ ասորերենի դասագիրք: Այս նույն առաքելությունը առաջին անգամ Իրանում

կազմակերպեց դպրոց աղջիկների համար⁴⁴: Հաջի Միրզա Աղասի Երևանցու իշխանության տարիների ընթացքում հիմնադրվեցին ավելի քան 100 միսիոներական դպրոցներ, նկատելի առաջընթաց արձանագրվեց անգրագիտության դեմ պայքարում հատկապես հյուսիս-արևմտյան Իրանում. 1850թ-ին ասորի կանանց 80 %-ը, երիտասարդ հայերի 75 %-ը և Իրանի հրեաների 90 %-ը գրաճանաչ էին⁴⁵: Հաջի Միրզա Աղասի Երևանցու բարյացկամ վերաբերմունքը միսիոներների հանդեպ թույլ տվեց կարճ ընթացքում երկրում ունենալ զգալի քանակությամբ երիտասարդ գրաճանաչ մարդկանց:

4-րդ գլխի տասներկուերորդ գլխում քննարկվում են իրանա-օսմանյան հարաբերությունները սաղրագամ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարման տարիներին: Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների ամենախրթին հարցը դա Իրանի արևմտյան սահմանների հարցն էր, ինչը 1639թ-ի Քասրը Շիրինի պայմանագրից հետո էլ առաջ էր բերում անհամար վեճեր և տեղային ընդհարումներ: Թուրքերը հավակնում էին Խուզիստանին և Մոհամմեդուին և ոչինչ չէին անում մաքսանեցություն դեմ, իսկ իրանցի շիա ուխտավորների համար ստեղծում էին ամեն տեսակ խոչընդոտներ՝ Իրաքի և Արաբիայի սրբազան վայրեր ուխտագնացություններ կատարելիս: Թուրքական Իրաքում պարբերաբար իրագործվում էին շիա բնակչության կոտորածներ, ինչպես, օրինակ, 1835, 1837, 1838 թթ-ին: 1842թ-ին իրանական զորքերը ներխուժեցին Իրաք և թուրքերից մարբեցին Քերբեյան⁴⁶: Հաջի Միրզա Աղասի Երևանցին շահի անունից նամակ հղեց ռուսական կայսրը միջնորդ լինելու խնդրանքով, և մինչ նամակը կհասներ Պետերբուրգ, դրա մասին իմացան անգլիացիները և ֆրանսիացիները և անմիջապես իրանական կառավարությանն առաջարկեցին իրենց միջնորդությունը: Հատկապես դրա վրա պնդում էին անգլիացիները, որոնք անհանգստանում էին Իրանում ռուսական ազդեցության ուժեղացումից: Հենց Ռուսաստանն էր պնդում Երզրումում 1843թ-ին սեղանի շուրջը բանակցելու վրա՝ մեծ տերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ընթացան դանդաղ և ծանր բանակցություններ, թուրքերն այն մի քանի անգամ ըդիստեցին և կրկին սկսեցին Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ճնշման տակ: Ի վերջո, բանակցություններն ավարտվեցին 1847թ-ի մայիսին կնքված Երզրումի պայմանագրով, որը կարգավորում է իրանա-թուրքական սահմանը մինչ օրս: Հաջի Միրզա Աղասի Երևանցին մղեց դիվանագիտական դժվարին պայքար՝ որպեսզի պահի Խուզիստանն ու Մոհամեդում և դա նրան հաջողվեց, թեև Իրանը Թուրքիային զիջեց Մուլեյմանիեն իր շրջանով: Թուրքերը խոստացան անարգել թույլ տալ Իրանի շիա ուխտավորներին այցելելու Իրաք՝

⁴⁴ Ахмади М. Тахир. Нахостин мадорес-е мисиунха-е америкайа дар Иран. //Манджале-е Гянджин-е аснад. Сал-е севом. Дафтаре чехаром. Тегеран. Заместан 1372/1993. с. 21.

⁴⁵ Ахмади М.Т. Нахостин мадорес-е мисиунха-е америкайа дар Иран. Техран. Заместин 1372/1993. с. 23.

⁴⁶ Tapper R. The Tribes in eighteenth and nineteenth century in Iran //The Cambridge History of Iran. Vol. 7. Cambridge. 2008. pp. 519-522; Багбан А.М. Ирано-турецкие пограничные конфликты во второй четверти XIX в. //Известия АН Таджики. ССР. Душанбе. 1972. сс. 38-40.

⁴² Из донесения русского посланника в тегеране Долгорукого в министерство иностранных дел России //Новая история Ирана. Хрестоматия. М. 1988, с. 105.

⁴³ Algar H. Religion and State in Iran. 1785-1906, Berkeley – Los Angeles. 1969, pp. 137-140; Элгар Б. Дин ва доулат дар Иран /Изд. Тус. Техран, 1369/1990. сс. 171-175.

Քերթելա, Նեջֆ, Սամարա: Բազմաթիվ իրանցի պատմաբաններ 1843-1847թթ-ի բանակցությունները համարում են Հաջի Միրզա Աղասի Երևանցու դիվանագիտական հաղթանակը: Հաջի Միրզա Աղասի Երևանցու գործունեությունը որպես կառավարության ղեկավար նպաստել միջազգային ասպարեզում իրանական պետության դիրքերի ամրապնդմանը:

4-րդ գլխի տասներեքերորդ բաժինը նվիրված է Ղաջարների հարստությունից Հասան-խան Սալարի՝ հայտնի Ալլայար-խան Ասաֆ ադ-Դուլեի որդու ապստամբության ճնշման գործում Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարության մասնակցությանը: Հասան-խանի այս ելույթը սկսվեց Խորասանում 1844թ-ին Բաղդադում նստող իր հոր՝ Ալլայար-խանի ազդեցության ներքո: Ալլայար-խանը Մոհամմադ շահի մորեղբայրն էր և ստիպված էին զգուշորեն գործել նրա ապստամբ որդու դեմ: Ալլայար-խանը մամակով դիմեց շահին՝ պահանջելով անմիջապես պաշտոնազրկել սադրազամ Հաջի Միրզա Աղասի Երևանցուն՝ մեղադրելով նրան գոյություն չունեցող հանցանքների և Ղաջարների հարստության հանդեպ ունեցած իբր ատելության մեջ: 1845թ-ին Հասան-խանի և նրա եղբայր Մոհամմադ-խան Սալարիի ապստամբությունը նոր ուժով բռնկվեց Խորասանում, քանի որ շահը ոչ մի կերպ չարձագանքեց սադրազամին պաշտոնակ անելու մասին պահանջներին: Հաջի Աղասին պնդում էր ապստամբների դեմ Թեհրանից զորք ուղարկելու անհրաժեշտության վրա՝ շահի եղբայր Համզա Միրզայի գլխավորությամբ: Միանալով Հերաթի աֆղանների ուժերի հետ՝ Համզա Միրզան Մեշհեդի մոտ ջախջախեց Ալլայար-խանի որդիների զորքերին: Սակայն Հասան-խան սալարիի պատասպարվեց Խորասանի խուլ վայրերում և դեռ 3 տարի շարունակում էր հակակառավարական քայլերը, ինչը սակայն այլևս չէր սպառնում կենտրոնական իշխանությանը: Այսպես, ըստ անհրաժեշտության դիմելով ուժի կիրառությանը և ապահովելով անգլիացիների աջակցությունը, Հաջի Միրզա Աղասի Երևանցին կարողացավ հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ: 4-րդ գլխի վերջին՝ եզրափակից տասնչորսերորդ բաժնում անդրադարձ է արվում Ֆրանսիայի հետ փոխհարաբերություններին, որոնք Նապոլեոնից հետո երկար ժամանակ սառեցված էին և վերակենդանացան Հաջի Միրզա Աղասի Երևանցու ջանքերի շնորհիվ:

Երկարատև դադարից հետո 1838թ-ին նշանակվեց արտակարգ և լիազոր դեսպան: Ֆրանսիա ուղարկված իր նամակներում բացի իրանցի ուսանողներին հովանավորելու խնդրից, Հաջի Աղասին խնդրում էր ուղարկել հմուտ վարպետների՝ ապակեգործների, ոսկերիչների, հրետանավորների, հեծելազորային մասնագետների՝ Իրանում ևս հիմնելու այս ճյուղերը, ինչպես նաև երկրաբանների՝ օգտակար հանածոների որոնումների համար: 1839թ-ին ֆրանսիական դեսպանությունը կոմս դե Սասի գլխավորությամբ ժամանեց Թեհրան: Հաջի Աղասին ֆրանսիացիների հետ տարվող բանակցություններում փորձում էր նրանց հակադրել Անգլիային և Ռուսաստանին, սակայն ֆրանսիացիները դրան չզննեցին՝ կնքելով միայն կաթոլիկներին վերաբերող պայմանագիր, որը թույլատրում էր կառուցել եկեղեցիներ և վանքեր, ունենալու անշարժ գույքի սեփականության իրավունք, դպրոցների բացում և այլն: 1845թ-ին Հաջի Միրզա Աղասի Երևանցու կողմից մի նոր փորձ արվեց հաստատելու առավել սերտ հարաբերություններ Ֆրանսիայի հետ. Փարիզ ուղարկված

դեսպանությունը Միրզա Մոհամմադ-Ալիի Շիրազիի գլխավորությամբ ֆրանսիացիներին առաջարկեց համագործակցության մեծ ծրագիր Ֆրանսիացիները իրենց համար պահանջեցին այնպիսի մասնաբաժիններ և առևտրական արտոնություններ, ինչպիսիք Իրանում ունեին Անգլիան և Ռուսաստանը: Բանակցությունները ձգվեցին երկար տարիներ:

Վերջաբանում արված են ամփոփ եզրակացություններ ատենախոսության թեմայից:

Ընդգծվում է, որ սադրազամ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կառավարման տարիներին (1835-1848թթ.) ձեռնարկվել են մի ամբողջ շարք քաղաքական, մշակութային, տնտեսական, ռազմական քայլեր, որոնք հող նախապատրաստեցին մի քանի տարի անց Թաղի-խան Ամիր Քաբիրի բարեփոխական գործունեության համար և ամրապնդեցին իրանական պետությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ասպարեզում:

Հաջի Միրզա Աղասի Երևանցու հանդեպ անբարյացկամության մեծաթիվ փաստերը բացատրվում է երկիրն ազատականացնելու, ինչպես նաև ողջ հասարակական-քաղաքական կառուցվածքը բարեփոխելու նրա փորձերով, ինչին պատրաստ չէր իրանական ազնվականության մեծագույն մասը և շարքային բնակչությունը:

Հատկապես առանձնանում էր և այժմ էլ առանձնանում են նրա հանդեպ անբարյացկամ վերաբերմունք ցուցաբերող անգլիացի պատմաբանները: Նրանք անգամ Հաջի Միրզա Աղասի Երևանցուն մեղադրում են Ռուսաստանի հանդեպ առանձնահատուկ համակրանք ունենալու մեջ և իբր թե նա գործել է ռուսաց կայսեր շահերից ելնելով: Իրականում մեծան պնդումները ճշմարիտ ոչինչ չեն պարունակում, քանի որ Հաջի Միրզա Աղասի Երևանցու գործունեությունից մենք տեսնում ենք, որ իր քայլերը կատարելիս նա ելնում էր միմիայն իրանական պետության շահերից և ողջ ուժով փորձում էր այն ամրացնել և բարձրացնել:

Համարում ենք, սադրազամ Հաջի Միրզա Աղասի Երևանցու կերպարը և մեծ ուշադրության արժանի նրա գործունեությունը միանգամայն անարդարացիորեն մոռացության են տրվել և պատմաբանների այս մեծ սխալը հարկ է ուղղել և նրան արժանին մատուցել՝ Իրանին՝ դեպի արդիականացում տանող ճանապարհի դժվարին ուղու վրա:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները.

1. Ահմադ Ալիզադե, 18-րդ դարի վերջում Իրանում առկա իրադրությունը և գահակալության համար Ադա Մոհամմադ խանի մղած պայքարը, "Orientalia", IX, Yerevan, 2009, pp. 3-18.
2. Ալի Ահմադ Ալի-Չադե, 1828թ. Թուրքմենչայի խաղաղ դաշնագիրը կնքելուց հետո Թեհրանում կայացած բանակցությունները և ոռոգման համակարգի ջախջախումը, «Կանթեղ», 3 (44), Երևան, 2010, էջ 226-234:
3. Ахмад Али-заде, Историческое значение деятельности Хаджи Мирза Агаси, «Կանթեղ», 4 (45), Երևան, 2010, էջ 131-142:

Али Ахмад Али-Заде

Общественно-политическое развитие Ирана в первой половине XIX в. и историческая роль Хаджи Мирза Агаси Ереванци

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – "Всемирная история". Защита состоится 3-го ноября 2011г. в 15.00 часов на заседание специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

Резюме

Представленная работа посвящена изучению истории Ирана в первой половине XIX в. в период правления первых трех Каджарских шахов (1796-1848гг.) и особенно исторической роли садр-азама Хаджи Мирза Агаси Ереванци.

Диссертация состоит из четырех глав, каждая из которых делится на несколько параграфов. Во **введении** обосновывается выбор темы и важность тех преобразований, которые произошли в стране в период, когда правительство возглавлял Хаджи Мирза Агаси. В **первой главе** рассмотрено традиционное устройство иранского общества в общественно-политическом плане к началу XIX в., внутреннее и внешнее положение страны при шахах Ага-Мохаммедхане и Фатх-Али-шахе. Внешняя политика Ирана в этот период характеризуется повышенной активностью европейских держав – Англии, Франции и России. Каждая из них преследовала в Иране свои цели, но методы использовала разные. Если Англия и Франция действовали в основном дипломатическими путями и стремились утвердиться в Иране с учетом стратегической важности сухопутных и морских путей в Индию, то Россия больше действовала с помощью военной силы и стремилась присоединить к себе кавказские провинции, которые в основном в это время были государствами - ханствами. В этой же главе рассмотрена борьба за власть династии Каджаров и влияние двух русско-иранских войн (1804-1813 гг. и 1826-1828гг.) на внутреннее положение в стране, а также взаимоотношения с Османской Турцией.

Актуальность темы исследования обоснована тем, что до сих пор 13 летняя деятельность на посту садр-азама (главы правительства) Хаджи Мирза Агаси не нашла в историографии достойной оценки и во многом предана забвению из-за происков его врагов и недоброжелателей, а адекватная оценка его жизни и деятельности поможет восстановить историческую справедливость и показать всю сложность периода первых реформаторов, среди которых он занимает по праву одно из видных мест.

Для понимания важности и необходимости тех реформ и преобразований, которые были начаты при Хаджи Мирза Агаси Ереванци необходимо было изучить внутреннюю общественно-политическую ситуацию в стране в первой половине XIX в. и этому посвящена **вторая глава** диссертации. Традиционные органы власти и бюрократии переживали кризис в начале XIX в. и без понимания этого факта трудно понять необходимость преобразований Хаджи Мирза Агаси и его продолжателя Амир Кабира Мирза Таги-хана.

В **третьей главе** работы анализируются кризисные явления в экономической и политической жизни Ирана в правление Фатх-Али-шаха (1797-1834гг.). После русско-иранских войн в страну хлынул поток дешевых русских и английских фабричных товаров, которые разоряли иранских ремесленников и создавали социальное напряжение в стране. Необходимо было вмешательство государства в процесс модернизации экономики и это хорошо понимал Хаджи Мирза Агаси. Он пытался подключить ресурсы государства к процессу модернизации. Отдельно рассмотрен вопрос о принципе наследования трона шаханшаха. Для Каджаров более привычным был принцип кочевников, когда старший в роду и объявляется главою государства. Но для иранского государства с его многовековой историей более характерен был принцип занятия трона по завещанию и закону, как во всех централизованных национальных государствах. Именно этот принцип победил во время прихода к власти в 1834 г. шаха Мохаммада, а от этого во многом зависели и темпы и методы модернизации страны, которая становится очевидной необходимостью для всех слоев общества и в первую очередь для высших слоев знати, купечества и землевладельцев. Новый шах назначил садр-азамом с 1835 г. по 1848 г. Хаджи Мирза Агаси и именно в этот период в стране начались первые шаги на пути к модернизации.

Вся **четвертая глава** (почти половина работы) посвящена жизни и деятельности Хаджи Мирза Агаси. Он родился в 1783г. в столице беглярбекства Шокуре Саад городе Ереване, где его отец был моллой в мечети и получил первоначальное образование в семье. Затем он совершил хадж в святые города шиитов – Кум, Кербелу. Некоторое время он потом работал в канцелярии эчмиадзинского армянского Католикоса. С 1818 г. он переселился в г. Хой, а с 1821г. – Тавриз. В Иране он приобрел известность как домашний учитель в семьях богатых людей и несколько лет он обучал наукам будущего валиахда (наследника престола) – сына принца Аббас-Мирзы молодого Мохаммада.

После назначения садр-азамом Хаджи Мирза Агаси многие знатные люди в обществе стали завидовать такому быстрому продвижению человека безродного и небогатого, а многие английские и русские авторы XIX в. отзывались о нем только негативно, потому что не могли ему простить четкой национально-патриотической позиции и постоянного противодействия политике этих держав в Иране. Хаджи

Мирза Агаси понимал, что в военно-техническом отношении Иран отстал от Англии и России и выработал политику лавирования между ними, стремясь противопоставить их интересы друг другу.

С этой же целью он предпринимал активные дипломатические шаги для привлечения в страну Франции и Бельгии. Стремление Англии и России закабалить Иран и превратить его в игрушку в своих руках встречало резкую позицию отпора со стороны садр-азамов. Хаджи Агаси добивался уменьшения и отмены пенсий и пособий вождям кочевых племен, стремился всячески ограничить их влияние на внутренние политические процессы в стране. Недовольных его политикой в стране было много и это пытался использовать английский ставленник Ага-хан Махаллати. Борьба против Ага-Хана была фактически направлена на сохранение единства иранского государства, от которого исмаилиты пытались оторвать его отдельные части.

В области культурной политики Хаджи Агаси старался наладить печатание книг и газет в Иране и направлял на учебу в Европу многих молодых людей. При нем появились первые типографии, он запретил физические наказания в медресе. Правительство Хаджи Агаси приняло ряд мер в области сельского хозяйства и ремесленного производства, которые способствовали модернизации страны и защищали иранских производителей от европейского влияния. Он добился освобождения от налогов шахтеров и ткачей, оружейников и металлургов, выписал из Европы мастеров, которые обучали иранцев строить шахты и добывать уголь. Он добился открытия новых рабочих мест в промышленности, особенно в провинции, а не только в Тегеране. В торговле с европейскими странами у Ирана был неравномерный торговый баланс – в страну ввозилось больше товаров, чем вывозилось из нее. Хаджи Агаси стремился изменить этот неправильный баланс.

Отдельно затронуты отношения с Османской Турцией и процесс заключения Эрзерумского договора 1847 г. В конце этой главы речь идет о зарождении движения бабизма, которое Хаджи Агаси надеялся использовать против политики Англии и России в Иране, но ему это не удалось. К тому же в 1848 г. умер шах Мохаммад и садр-азам Хаджи Агаси ушел в отставку и через год умер в изгнании в Ираке.

В **заключении** представлены выводы по теме. В годы правления садр-азамов Хаджи Агаси были предприняты шаги в культурном, экономическом, промышленном, военном и дипломатическом отношении, укрепившие иранскую государственность, а роль садр-азамов следует оценивать в истории Ирана как успешную, положительную и прогрессивную – он старался возвысить и укрепить иранское государство без войн и потрясений, используя те небольшие ресурсы и возможности в условиях своего времени, которые у него были.

Ali Ahmad Ali-Zadeh

Social and Political Development in Iran in the First Half the XIXth Century and the Historical Role Hadji's Mirza Agasi Erevantsi.

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World history" 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 15,00 on November 3, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA.

Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

SUMMARY

The thesis consists of introduction, 4 chapters, conclusion, bibliography, and appendix of tables with the state of trade in Iran in the forties of the 19th century.

This paper covers the study of the Iranian history in the first half of the 19th century. It studies the internal system, social development and particularly the historical role of Sadr-azam (the head of government) Hadji Mirza Agasi Yerevantsi.

As a result of the first Russo-Iranian war in 1804-1813 such Caucasian provinces as Gyanja, Derbent, Shirvan, Chekka, Karabakh, Baku and Talyshwere seized from Iran. Iranian troops were much inferior to the Russians in military equipmentand technique. But even under such conditions they managed to retain Yerevan. Despite the siege of the Yerevan fortressand the two marches of the Russian forces the Iranians succeeded in reserving the Yerevan khanate. The Gyulistanian peace treaty of 1813 assigned to the Russian empire 8 of the 10 Caucasian province khanates of the Iranian state.

The second Russo-Iranian war was also unsuccessful for the Iran. In spite of creation of new armies by the crown prince Abbas Mirza the war held disastrous for the Iran. Both France and England sent their experts for preparation of the armies for the new war with Russia. But it didn't help a lot – a huge lag in military technique of Qadjars' Iran also played a role in that war. As a result of the second war the Russians captured Yerevan and Nakhichevan, which by the terms of the Treaty of Turkmenchay of 1828 passed on to Russia as well.

In the **first chapter** of the thesis the importance and actuality of the theme are grounded. The traditional system of the Iranian society in the beginning and the first half of the 19th century and the internal and external positions at the time of the first three Qadjar shahs (1796-1848) are examined. An intensive activity in foreign policy of Iran is noticeable in the relations with England, Russia and France. Opposed to England and France, Russia acted in a war way, striving to join Caucasian provinces of Iran. By turn England and France imposed more diplomatic pressure on Iran, for the purpose of getting the provinces under their influence. Two Russo-Iranian wars and their influence on the internal state in the country are analyzed separately.

The **second chapter** of the work presents the structure of the authority, the most important organs of state power, and the land property and land tenure systems in the beginning of the 19th century.

In the **third chapter** the question of shah'sinheritance of the throne is examined. The transfer of the throne to the eldest in the ruling dynasty was more habitual for the nomads, but it ran counter to the principle of hereditary succession under the will. The struggle upon this question ended with the victory of valiahd Mohammad in 1834.

The economic development and the critical domestic crisis in state structures during the thirties –forties of the 19thcentury coincided with the accession to power of shahanshah Mohammad (1834-1848). The third chapter is devoted to these questions. In the thirties many representatives of the ruling aristocracy realized the necessity of modernization in the country.

In the **forth chapter** of the paper the activity of Sadr-azam Hadji Mirza Agasi Yerevantsi (1783-1849) is presented. HadjiAgasi was not of a high social origin and was not wealthy, however many noble people envied his easy sledding. He was born in Yerevan in 1783 in a family of mullahof local mosque. The primary education he got in his family under the direction of his father. And in the young days Hadji Agasi made a hajj to the Shiites' holy places such as Karbala, Najaf and others.

In 1818 he moved to Khoi and then to Tabriz. In Iran he became popular as a good tutor and a connoisseur of the Koran. He was the teacher of future shah Mohammad. In 1835 he was appointed Sadr-azam -the head of the Iranian state by the firman of the shah. During 13 years (up to 1848) Hadji Agasi had vigorous activity.He prepared reforms oriented to all aspects of life of Qadjars' Iran and tried to keep the unity of the Iranian state. All his work as a head of the state hasn't been appreciated until now and hasn't been studied by the research scientists. In the foreign policy he tried to oppose England to Russia and to gain from their conflict. Much was done by Hadji Agasi for the maintenance of unity of the country and repression of separative protest actions. He put the base of the political orientation in trade and industry, craft and culture, which later led to the reforms of Amir Kabira. Hadji Agasi sent young men to study in Europe, established temporal education in Iran. He tried to use the studies of Babism, which had just arisen in Iran, to struggle against external enemies. Many of the HadjiAgasi's initiations developed later in the fifties. He began the modernization in the country and his merits in this field are eminent. The leash-loosening policy in economics revived all the commercial and industrial life of the country. The external enemies blackened Hadji Agasi's reputation and wrote abouthimall kinds of nonsense, because he opposed England, Russia, Ottoman Empire openly and defend nationalinterests. Hadji Agasi should be considered as one of the most progressive-minded figures in the history of Iran of the 19th century, as all his activity was in the interests of Iranian people.

